

գրեն է. Ը. դարերու մատենագիրները: Գլխաւոր եկեղեցիին առջեւ կը տեսնուի աւերակները երկու փոքր եկեղեցիներուն, որոնց մին աջ կողմը՝ նուիրուած է Մովսէսի, միւսը ձախին՝ Եղիայի: Այս երկու մատուռները շինուած են միւսնոյն ժամանակ և գլխաւոր եկեղեցիին յատակագիծով: Գլխաւոր եկեղեցիին աւերակներուն մէջ գտնուած են սպիտակ մարմարէ խոյակներ, ամէնքն ալ միւսնոյն ճարտար ձեւով քանդակուած: Այս խոյակներէն մին շատ լաւ պահպանուած է, և կորնթական է, թէպէտև յետին ժամանակի գործ, և Բեթղեհէմի եկեղեցիին խոյակներուն նման: Հնախօսները կարծիք կը յայտնեն թէ Մեծն Կոստանդիանոսի ժամանակի հնութիւն կրնայ ըլլալ:

Սարահարթին արեւմտեան կողմը Յոյները մատուռի վերածած են այր մը՝ որ ժ. Բ. դարուն նշանաւոր եղած է: Թէ՛ Դանիէլ վանականին եւ թէ՛ յոյն կրօնաւոր Փոկասի եւ ուրիշ ուխտաւորներու Յոյնք ցոյց տուած են զայն՝ իբր բնակարան Մելքիսեդեկ թագաւորին: Ոմանք կը կարծեն թէ Մելքիսեդեկ Աբրահամու հանդիպեցաւ Թարթրի ստորոտը, կամ այն լեռնէն երկու մղոն հեռի, դէպի Հերմոն: Բայց անոր բնակութեան մասին պատմուածք մը չկայ: Թարթրի վրայ գտնուած են յունական և արաբական արձանագրութիւններ(\*). վերջիններս կը խօսին տեղւոյն ամրութեանց շինութեան մասին:

P. Barnabé իր le Mont Thabor, Notices historiques et descriptives խորագրով մենագրութեան մէջ, ինչպէս Թարթրի սրբավայրերուն աւերակաց, նոյնպէս տեղւոյն բերդին, աղօրիքին, գերեզմանատան այրերու, Թարթրի վրայ գտնուած արձանագրութիւններու, հողէ ամանէ շինուած արաբական ձեռակերտ ումբերու և այլ հնութեանց վրայ կու տայ մանրամասն տեղեկութիւններ, որոնցմէ մենք ալ օգտուած ենք:

Գ.— Հայաստանեայց Եկեղեցիին շատ կանուխէն ըմբռնած է թէ Թարթրն է Քրիստոսի Այլակերպութեան լեռը. այդ պատճառով իր շարականներուն, տաղերուն եւ երգերուն մէջ պանծացուցած է նոյն լեռը: Այլակերպութեան կամ Վարդավառի

(\*) Արաբական արձանագրութիւններն ու ընդօրինակութիւնները լուսանկարներով և բացատրութիւններով տեսնել P. Henri Lammens ի 1909ին հրատարակած Inscriptions Arabs du Mont Thabor տետրակին մէջ: